Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
1745

1999

ԹՈՒՂԹ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

ՄՐԲԱՋԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ

ՊԻՍԱՒ ԻՆՆԵՐՈՐԴԻ

ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԵԱՄԲ ԱՍՏՈՒԾՈՅ

ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ

ԱՌ ՀԱՄՕՐԷՆ ՊԱՏՐԻԱՐՔՍ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՆՍ,

ԵՒ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՆՍ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԾԻՍԻ ԵԿԵՂԵՑԵԱՑ

ՈՐՔ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅՆ ՀԵՏ ՇՆՈՐՀՔ ԵՒ

ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ ՈՒՆԻՆ

ՏՈՒԵԱԼ ՅԱՄԻՆ 1862

ԹԱՐԳՄԱՆԵԱԼ Ի ԼԱՏԻՆ ԲՆԱԳԻՐԷ

ՏՊԵԱԼ Ի ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ

— ՌՈՅԺԱ —

1311
1862

43853-47

28088-62

9-11745-40

28. 1750

ԼԵՕ
ՀԱՅԿԱՆ

ՊԱՏՈՒԱԿԱՆ ԵՂԲԱՐՑՍ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԾԻՍԻ ԵԿԵՂԵՑԵԱՑ ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐՈՒՆ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐՈՒՆ ԵՒ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐՈՒՆ

ՈՐՈՆՔ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅՆ ՀԵՏ ՀՆՈՐՀՔ ԵՒ
ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ ՈՒՆԻՆ

ՊԻՈՍ ԺԱ. ԱՆԱՅՍՊԵՏ Թ.

ՊԱՏՈՒԱԿԱՆ ԵՂԲԱՐՔ

ՈՂՋՈՅՆ ՈՒ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Ի՞ԱՐԴԿԱՅԻՆ այգիս սիրելիր Փրկիչը, Քրիստոս Տէրը, Աստուծոյ Միածին Որդին ուզելով, ինչպէս քաջ գիտէք՝ Պատուական Նշանաքը, բոլոր մարդիկ սատանային գերութենէն ու մեղայ լուծէն հանել, և խաւարէն իրեն զարմանալի լոյսը կանչելով փրկել, մեզի դէմ եղած դատաստանին մուրհակը խաչափայտին վրայ բեւեռելով ջնջելէն ետքը՝ իրեն արեամբը ստացած Կաթողիկէ Եկեղեցին՝ իբրև միմիայն Աստ-

ծոյ հեղգանոց պոռն(1) սիմսիայն երկնէց արքայու-
ընուն(2) կամ սիմսիայն ընուն վրայ հեղուած չաղաչ(3)
և կամ ոչ գարոխ(4) ու ոչ հոգ մարմին որն որ հոգ-
ով կը կենայ ու կ'ապրի, և մէկ հաւատով
յուսով սիրով ու մի և նոյն խորհուրդներու,
կրօնի և վարդապետութեան կապերով յա-
դեալ ու միաւորեալ մարմին մը(5) ձևացուց
ու յօրինեց, և իրեն անուանած և ընտրած
կառավարները դրաւ ու միանգամայն որո-
շեց և ս՝ որ ցորչափ աշխարհ.քս անկործան կը
մնայ, այսպէս ձեւացեալ ու յօրինեալ Եկե-
ղեցին կենայ և աշխարհ.քիս մէկ ծայրէն մի-
կալ ծայր բոլոր ժողովրդներն և ազգերը բո-
վանդակէ, որպէս զի որ և իցէ ազգին մար-
դիկը իրեն ստուաձային կրօնն և շնորհ.քն
ընդունին և նոյնը մինչուկ իրենց վերջին շուն-
չը պահելով յաւիտենական փրկութեան ու
փառաց հասնին։

Բայց որպէս զի սա հաւատոյ և վարդա-
պետութեան միութիւնը միշտ իր եկեղեցւոյն
մէջ պահուի, ամենուն մէջէն մինակ՝ զՊետ-
րոս ընտրեց, զոր առաքելոց գլխաւոր,
երկրի վրայ իրեն փոխանորդ և իր եկեղեցւոյն
անվիանդ հիմ և գլուխ դրաւ, որպէս զի
Պետրոս թէ՛ պատուոյ ատիճանաւ և թէ՛

(1) Ա. Տիմոթ գ. (2) Մատթ ԺԳ. և ուրիշ տեղատեղ։
(3) Մատթ Ե. (4) Յովհ Ժ.
(5) Եփես Դ. և այլուր։

մանաւոր հեղինակութեան, իշխանութեան և իրաւասութեան առաւելութեամբ ուրիշ ամենէն շատ աւելի ըլլալով՝ ոչխարքն ու գառինքն արածէ, Եղբայրները հաստատէ ու քովանդակ Եկեղեցին ուղղէ և կառավարէ։

Այդ՝ որովհետև Քրիստոս ուզեց՝ որ աս իր Եկեղեցին միմիայն և անարատ մինչուկ աշխարհքիս կատարածը տեւէ մնայ, և միանգամայն պատուիրեց որ մի հաւատք, մի վարդապետութիւն ու մէկ կառավարութեան կերպ պահուի, անոր համար պատուոյ, իշխանութեան և իրաւասութեան կողմանէ ինչ առաւելութիւն, ինչ հաւասոյ կատարելութիւն և ինչ անշարժ հաստատութիւն որ Պետրոսի տրուեցաւ, նոյնն անվրէպ պետրոսի յաջորդներուն՝ այսինքն Հռոմայ Քահանայապետներուն աւանդուած է, որոնք աս Պետրոսին Հռովմէական աթոռոյն վրայ կը նստին, և իրենց 'ի դէմս երանելի Առաքեալ պետին նոյն իսկ 'ի Քրիստոսէ Տեառնէ բովանդակ Տիրունական հօտին գերագոյն հոգը յաստուածուստ յանձնուած, և ընդհանրական Եկեղեցւոյ ծայրագոյն կառավարութիւնը աւանդուած է։ Ձեզի քաջայայտ և ծանօթ է, Պատուական Եղբարք, թէ ինչպէս մեր աստուածային կրօնին աս վարդապետութիւնը Սիւնհոդոսները և Սուրբ Հայրք համամիտ ու համաբարբառ ամէն ատեն քարոզած

պաշտպանած և կրկին կրկին զրուցած են։ Որովհետև ասոնք երբէք դադրած չեն տրվեցուցնելէն թէ մի է Աստուած, մի է Քրիստոս, մի է Եկեղեցի ու միմիայն է ան Աթոռը որն որ Պետրոսի վրայ Քրիստոսի Տեառն մերոյ խօսքովը հիմնուած է(1), և անոր վրայ՝ երբև վիմի և ամուր քարի վրայ՝ աստուածաստ բոլոր բովանդակ Քրիստոնէական հաստատակութեան շէնքը կանգնուած է(2)։ Այսն զի ամեն տեղ ասիկայ Պետրոսի աթոռ թէ՛ ըստուած և թէ՛ սեպուած է, որն որ միմիայն է ու Հռովմէական Եկեղեցւոյ առաջին յաջորդութիւնն է(3), որն որ բոլոր տիեզերաց վրայ գլխաւոր իշխանութիւն ունենալով կը փայլի(4), որն որ արմատ և սկզբնատիպ է՝ ուսկից Քահանայական միութիւնը իր ծագումը կ'առնու՝(5) չէ թէ միանակ բոլոր եկեղեցեաց գլուխ հայր նաեւ մայր և ուսուցիչ է(6), քարեպաշտութեան մայրաքաղաքը՝ որուն մէջ Քրիստոնէական կրօնի հաստատութիւնն ամբողջ և կատարեալ է(7), և հոն

(1) Ս. Կիպրիանոս թղթ 40։

(2) Ս. Կիւրեղ Աղեքսանդրացի Մեկն. Յովհ. Գիրք Բ. Գլ. 42.

(3) Ս. Ողդատոս Միլեւիտացի Գիրք Բ. Ընդդ. Պարմեն։

(4) Երկր. Ժողով Նիկիոյ. Արձանագր. 2։

(5) Ս. Կիպրիանոս. Թղթ. 15 և 55։

(6) Պեղագիոս Բ. Թղթ. Ա. առ Արևելեան եպիսկ. և Ժողով Տրիտենդեան. Նիստ Է. վասն Մկրտ, կան. Ճ։

(7) Յովհ. Կոստանդինուպօլսեցւոյ Սինհոդոսական թուղթ

Առաքելական աթոռոյն գլխաւորութիւնը միշտ կենդանի մնաց[1], և ան վերին վրայ յեցած կը կենայ՝ զորն որ դժոխոց հպարտ դռները չեն կրնար յաղթահարել[2]. հոն առաքեալք իրենց արեանը հետ վարդապետութեան լուրը թափեցին[3] և պատուական հաղորդութեան իրաւունքներն անկից ամենուն կը բաշխեն[4]. ասոր պէտք է որ ամենայն հնազանդութիւն ու պատիւ ընծայենք[5], և ո՛վ որ զանիկայ թող կուտայ, պարապ տեղ կը վստահի որ Եկեղեցւոյ մէջ է[6]. անկէ դուրս ո՛վ որ դառն կ'ուտէ, պիղծ է[7]։ Դարձեալ Պետրոս՝ որն որ իր աթոռոյն վրայ թէ՛ կենդանի է և թէ՛ վերակացութիւն կ'ընէ, փրկչաբարոյներուն ու հարցընողներուն հաւատոյ ճշմարտութիւնը կը մատակարարէ[8]. Պետրոս՝ որն որ մինչուկ հիմայ և ամեն ատեն իրեն յաջորդացը վրայ կենդանի է ու վճիռ կուտայ[9], ինք Լեւոնին բերնովը խօսեցաւ[10]։

աւ. Հորմիզդաս Քահանայապետ. Սողոմէն. Պատմ. Գիրք Գ. Գլուխ. 8։

(1) Ս. Օգոստ. Թուղթ 161։
(2) Ս. Օգոստ. 'Ի Մեկն. Սաղմ. և ընդդ. Դանուբեանց։
(3) Տէրտուղիանոս վասն Նախագրի. Գլ. 36։
(4) Ս. Ամբրոսիոս. Թուղթ. 12. աւ. Դամասոս։
(5) Ժողով Եփեսոսի. Արձան. Դ։
(6) Ս. Կիպր. վասն միութեան Եկեղեցւոյ։
(7) Ս. Հերոնիմ. Թուղթ. 51. աւ. Դամասոս։
(8) Ս. Պետրոս Ոսկեխօս. Թուղթ. աւ. Եւտիքէս։
(9) Ժողով Եփեսոսի. Արձանագրի. 3։
(10) Ժողով Քաղկ. Արձանագրի. 2։

Հռոմայ Քահանայապետը որն որ բոլոր տիեզերաց վրայ գլխաւոր իշխանութիւն ունի, Յիսուսը՝ Պետրոսի առաքելապետին յաջորդն է ու Քրիստոսի ճշմարիտ փոխանորդ, բոլոր եկեղեցւոյ գլուխ և ամենայն Քրիստոնէից հայր ու վարդապետ[1] և ուրիշ գրեթէ անթիւ անհամար խօսքեր՝ որոնք առանց վաւերական վկայութեան ժողովական յայտ յանդիման կը ցուցնեն թէ առ Աստուածեան Աթոռոյն ու Հռոմայ Քահանայապետին որչափ հաւատք, երկիւղածութիւն, պատուիրանապահութիւն և հնազանդութիւն ունենալու են անոնք՝ որոնք որ կ'ուզեն ճշմարիտ միայն ու տուրբ՝ Քրիստոսի Տեառն մերոյ եկեղեցւոյն վերաբերիլ՝ որպէս զի յաւիտենական փրկութեան հասնին։

Բայց Կաթոլիկէ Եկեղեցւոյ միութեանն ամենեւին դէմ չէ արքայն և օրինաւոր ծէսերու բազմապատիկ զանազանութիւնը, մանաւանդ թէ նոյն Եկեղեցւոյն պատիւը, մեծութիւնը, վայելչութիւնն և պայծառութիւնը աւելցուցնելու շատ կ'օգնէ։ Բայց ձեզմէ և ոչ մէկուն անծանօթ է, Պատուական Եղբարք, թէ ինչպէս ոմանք կ'աշխատին՝ գլխաւորաբար անզգոյշներն ու անհմուտները խաբելու ու մոլորեցուցնելու առ տուրբ Ա-

(1) Ժողով Փլորենտ. Յունաց միութեան վերայն մէջ։

թոռը զրպարտելով, իբրև թէ այլափառ աբեւելեանները ուղղափառ հաւատքի ընդունած ատեն՝ ուզէ որ ասոնք իրենց սեպհական ծէսը թողուն, ու Լատինական Եկեղեցւոյ ծէսն առնուն։ Թէ ասիկայ ո՛րչափ սուտ ու ճշմարտութենէ հեռի է, բացայայտ կը ցուցնեն ու կը վկայեն մեր Նախորդներուն Աբեւելեայց եկեղեցական գործոցը վերաբերեալ Սահմանադրութիւնքն և Ս. Աբելական Թուղթերը, որոնց մէջ մեր նոյն Նախորդները չէ թէ միայն ամէն ատեն յայտնած են՝ որ երբէք ա՛սանկ միտք մ՚ունեցած չեն, հապա նաև խստովանած են թէ սրտի մտօք կուզեն որ Աբեւեան եկեղեցեաց ծէսերը՝ որոնց մէջ ուղղափառ վարդապետութեան կամ բարուց համեստութեան դէմ մոլորութիւն մը տպրըդած չըլլայ, հաստատուն պահուին։ Ա՛յս մեր Նախորդացը կրկին կրկին և ամենապայծառ կերպով ըրած յայտարարութեանցը բոլորովին համաձայն են թէ՛ հին և թէ՛ նոր գործքերը. անանկ որ երբէք չի կրնար ըսուիլ թէ աս Ս. Աբելական Ս. Թոռը Կաթողիկէ միութեան դարձող Episkoposներու կամ Եկեղեցականներու կամ Աբեւեան ժողովուրդներու հրամայած ըլլայ որ իրենց օրինաւոր Ծէսը փոխեն։ Հապա՛ բոլոր Կաստանդնուպոլիս տեսաւ՝ թէ ինչպէս մեր Պատուական Նշանաւորը Մելեթիոս Դրամայ Ս. Եպիսկոպոսը՝

որն որ Կաթողիկէ Եկեղեցւոյ ծոցը դառնալովը մեզի մեծ միխիթարութիւն պատճառեց, իրեն սեպհական ծէսովն և հանդիսաւոր աւարտղութիւններով ու փառաւորութեամբ քաղմամբոխ ժողովրդեան առջև պատարագեց։ Ուստի, Պատուական Եղբարք, ինչպէս որ Ձեր եռանդուն եպիսկոպոսական հոգացողութենէն կ'ըսպասուի, չի դադրիք Ձեր թեմերուն Աղերին կրկին կրկին յիշեցնելու՝ որ յարմար եղանակներով ջանան աս զրպարտութիւնը յայտնի ընելու ու ցրելու. որովհետև ասով չարաչար մարդիկ միտքերը կը մոլորեցուցնեն և աս Առաքելական Աթոռոյն դէմ նախանձ և ատելութիւն գրգռելու կ'աշխատին։

Իսկ մենք, երբոր ասոնց նախանձոտութեան գաղտնի խորհրդովն աս Պետրոսեան Աթոռոյն վրայ նստելով, Քրիստոսի ընդհանրական եկեղեցւոյն գերագոյն կառավարութեանը հասանք, մեր բոլոր յոյսն ու վստահութիւնը Յիսուսի Քրիստոսի վրայ դնելով կը ջանանք մեր առաքելական պաշտաման ինկածը կատարելու ինչպէս որ օրըստօրէական ստիպումն ու բոլոր եկեղեցեաց հոգն Մեզմէ կը պահանջէ։ Որովհետև Ինքը աստուածային օգնութեանը ապաւինած ենք՝ որուն որ փոխանորդութիւնը հոս երկրիս վրայ, թէպէտ անարժանութեամբ կը վարենք, որն

որ ըսած է՝ թէ ահա ես մինչուկ աշխարհքիս կատարածը միշտ ձեզի հետ եմ և վկայած ալ է՝ որ դժոխոց դռները իրեն \;կեղեցւոյն դէմ երբէք յաղթող պիտ՚որ չըլլան. անոր համար ամենևին չենք վախնար ան անպարիշտ մեքենաւորութիւններէն, հնարքներէն ու յարձակումներէն, որոնցմով աս չար և անիրաւ ժամանակիս մէջ թշնամիները կաշխատին որ ուղղափառ կրօնը, թէ որ կարելի ըլլայ, 'ի հիմանց կործանեն, հապա ամեն ազգաց հոգեւոր բարիքն ու փրկութիւնը վնասելէն չենքդադրիր։ Վասն զի Քրիստոսի սէրը կ'ըսուիպէ զմեզ և չկայ մեզի համար այնչափ բաղձալի բան մը, բայց եթէ որ ամէն հոգ, աշխատութիւն ու մտածութիւն ամենայն սիրով յանձն առնունք՝ որպէս զի ամէն ժողովուրդները հաւատոյ միութեան դիմեն և աճին և զարգանան Աստուծոյ գիտութեամբն ու Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ծանօթութեամբը, որն որ ճանապարհ, ճշմարտութիւն ու կեանք է. այսինքն, արքական վարուց ճանապարհ աստուածային վարդապետութեան ճշմարտութիւն, ու մշտնջենաւոր երջանկութեան կեանք (1)։

Այսր ալ անտեղեակ չէք, Պատուական Եղբարք, թէ մեր Քահանայապետութեան ըս-

(1) Ս. Օգոստ. Մեկն. Յովհ.

կիրքէն՝ որչափ մանաւոր սիրով և անհան-
դիստ ջանքով մեր հայրական հոգաբարձու-
թիւնը Տէրունական հօտին ան մասին վրայ
դարձուցինք՝ որն որ ձեր հակողութեանը յանձ-
նուած է, և Զմիւռնոյի մատանեաւ կնքուած
և վերջի Յունուար ամսոյն 6 ին տրուած մեր
նոր թուղթէն կրցաք աւելի ևս իմանալ՝ թէ
որչափ ազ արեւելեան եկեղեցեաց բարիքն,
օգուտն ու յաջողութիւնը սրտի մօտք կը փըն-
տռենք։ Որովհետև նոյն թղթով Հաւատոյ
տարածման Յողովոյն մէջէն մանաւոր ժողով
մը կազմեցինք՝ որպէս զի նոյն Հաւատոյ տա-
րածման Յողովոյն՝ որն որ անընդհատ ծանր
ծանր զբաղմամբ բեռնաւորած է, մեծ օգնու-
թիւն մ'ընէ. և ան գործողութիւնը՝ զորն
որ նոյն Յողովը մինչև հիմայ ամենայն փու-
թով ու շատ գովութեանց արժանի կերպով
կատարած է, ինքն կատարէ՝ այսինքն, մինակ
արեւելեան եկեղեցեաց բոլոր իրողութեանցը
քննութիւնն ու որոշումն ինք հոգալով։ Ա-
նանկ կը յուսանք՝ որ Աստուծոյ օգնութեամբ
բը մեր այս տրամադրութենէն ու հոգացո-
ղութենէն բոլոր արեւելեան ազգաց օրէ օր
աւելի հոգեւոր օգուտ պիտ'որ ըլլան։ Վ ան
զի վստահ ենք՝ որ աս նոր մանաւոր Յողովը
զորն որ, շատ չէ՝ դրինք, մեր բաղձանացը
համեմատ՝ պիտ'որ չի դանդաղի ձեր իրողու-
թիւնները քննելու առեն՝ ան ամէն բան գոր-

ծաղրելու, որն որ Կաթողիկէ միութեան օրէ օր յառաջ երթալուն, ձեր եկեղեցիներուն երջանկութիւնն աւելցուցնելու, ձեր օրինաւոր ծէսերուն ամբողջութիւնը պահելու և հաւատացելոց մեծագոյն հոգևոր օգուտը հոգալու կրնայ որ և իցէ կերպով վերաբերութիւն ունենալ։

Բայց որպէս զի աս Յողովը կարող ըլլայ ամենայն ժրութեամբ ու փութով Մեզմէ իրեն յանձնուած պաշտօնը կատարել, և իր աշխատութիւններն ու ջանքն ադ եկեղեցեաց յաջողութեանը մեծապէս նպաստաւոր ըլլալուն, հարկ է՝ որ արևելեան ազգաց հոգևոր պիտոյքն աղէկ ճանչնայ. ան պիտոյքն՝ որոնց համար յարմար ատենին ու յառաջուընէ պէտք է որ հոգ տարուի։ Նոր որովհետև ձեր հոգացողութեանը յանձնուած հօտին վիճակին և որպիսութիւնը ձեզի աղէկ ծանօթ եղած է, Պատուական Նղբարք, անոր համար ձեր իմաստութեամբը յայտնի կը տեսնէք թէ հարկ է՝ որ ձեր եկեղեցիներուն ու ձեր հօտին վերաբերած բոլոր իրողութեանց վրայ, որչափ կարելի՝ շուտ, զՄեզ ճիշդ տեղեակ ընէք և ձեր թեմերուն վիճակին վրայ հաւատի տեղեկութիւն խաւրէք, և աս տեղեկութեան մէջ մանրամասն ցուցուած ըլլայ՝ ինչ որ թեմերուն կը վերաբերի. որպէս զի կարող ըլլանք անոնց մէջ գտնուած հաւատացեալներուն պի-

տոյնը ամենայն հոգացողութեամբ ճար ընել։ Սուրգիս շատ մեծ պիտ՚որ ըլլայ մեր միսի թարութիւնը, թէ որ ձեզմէ ամէն մէկը, Պատուական Տէրտերք, իրեն սեպհական թեմին ամէն իրողութիւնները ճշդիւ մեզի գրէ, թէ նոյն թեմին մէջ որչափ հաւատացեալք կան, որչափ են Տիկեղեցականք՝ որոնք իրենց պաշտօնին գործքերը կատարելով են հաւատացեալներուն օգնութեան կը հանին. նոյն հաւատացեալներն ալ ինչ ընթացք ունին՝ թէ՛ հաւատոյ և թէ՛ բարուց համեստութեան կողմանէ՝ Կղերն որչափ գիտութիւն և ուսում ունի, և նոյն Կղերն ինչ կրթութիւն առած է. ժողովուրդն ինչ կերպով մեր ամենասուրբ կրօնին ու վարուց վարդապետութեան կը հրահանգուի, և ինչ ճամբով կը նայ նոյն ժողովուրդը օրէ օր աւելի բարեպաշտութեան ու բարի վարուց առաջնորդուիլ ու յորդորուիլ։ Մինանդամայն կը բաղձանք գիտնալ՝ թէ ձեր դպրոցներն ինչ վիճակի մէջ են և որչափ տղաք անոնց կը յաճախեն։ Ու որովհետև աղէկ գիտէք, Պատուական Տէրք, որ թէ՛ որբազան և թէ՛ քաղաքային հասարակութեան բոլոր յոյսը՝ տղոց ուղիղ, փրկաւէտ ու կրօնական կրթութեանը վրայ կեցած է, անոր համար մեծապէս հարկաւոր է՝ որ տղաք իրենց մատաղ հասակէն ուղղափառ դպրոցաց յաճախեն, որպէս

զի մեր աստուածային կրօնին ճշմարտութիւնն ու պատուէրները ճշդիւ տրվելով՝ իրենց մատաղ միտքերը գէշ սկզբունքով տոգորուելու վտանգէն հեռու ըլլան։

Օ՜նց մ՚ընէք Աստվի իմացուներու՝ թէ արդեօք գրքերու հարկաւորութիւն ունիք, և միանգամայն ան ալ ծանուցէք՝ թէ ձեր կարծեացը համեմատ թէ՛ կղերին գիտութիւնը հոգալու և թէ՛ ժողովրդեան հրահանգը յառաջադէմ ընելու և չուղղափառաց սկզբունքն եղծելու ու հաւատացելոց բարեպաշտութիւնը ջերմացուներու համար՝ ո՞ր տեսակ գրքեր կրնան աւելի յարմար ըլլալ։ Դարձեալ՝ որովհետեւ լսեցինք՝ որ տեղ տեղ անանկ պատարագամատոյցներ ու ծիսարաններ կը գործածուին՝ որոնց մէջ քանի մը սխալներ սպրդած մնած են, և կամ քանի մը ինքնակամ փոփոխութիւններ խոթուած են, Ձեզի կ՚ինայ՝ որ Աստվի յայտնէք թէ Դուք ի՞նչ գիրքեր կը գործածէք, նոյնպէս իմացուներ՝ թէ արդեօք ասանկ գրքեր ատեն մը ամ Սուրբ Աթոռէն հաւանութիւն գտած են, կամ թէ կը կարծէք որ ուղղուելու սխալներ կան, և կամ ի՞նչ տարակոյսներ ունիք՝ զորոնք պէտք է լուծել, և կամ կա՛ն արդեօք զեղծումներ՝ զորոնք պէտք է վերցուներ։ Դարձեալ՝ կուզենք Ձենէ իմանալ՝ թէ Ձեր թեմերու մէջ Սուրբ Կաթողիկէ միութիւնն ի՞նչ

յառաջադիմութիւն կ'ընէ, աս միութեան ինչ արգելքներ կան, և ո՛ր յարմարագոյն կերպերով ասանկ արգելքները կրնան վերցուիլ, որպէս զի նոյն միութիւնն օրէ օր աւելի յառաջադէմ ըլլայ ու զարգանայ։

Կը տեսնէք անշուշտ, Պատուական Եղբարք, թէ ո՛րչափ սիրով, որչափ փութով ազգաբնակեան եկեղեցեաց վրայ հոգ ունինք, և ինչչափ մեծ բաղձանք ունինք՝ որ արեւելեան ժողովրդոց մէջ մեր ամենատուրբ հաւատքը, կրօնը, բարեպաշտութիւնն օր ըստ օրէ աճի, զարգանայ ու ծաղկի։ Ապահով ենք՝ որ Դուք ձեր Եպիսկոպոսական պաշտամանը պարտուցը ու հոգեւոր եռանդին համեմատ, ձեր բոլոր հոգն ու մտածութիւնը պիտ՝ որ բանեցունէք մեր Աստուածային կրօնը պաշտպանելու և տարածելու ու ձեր հօտին փրկութիւնը հոգալու։ Եւ որովհետեւ թշնամին, մանաւանդ աս ողբոց արժանի ատեններս, չի դադրիր Տէրունական աղարակին մէջ որոմ ցանելէն թէ ժանտաբեր գրքերով և օրագիրներով, և թէ՛ այլանդակ կարծեաց հրէշներով՝ որոնք ուղղափառ հաւատոյ ու վարդապետութեան բոլորովին հակառակ են, անոր համար կրնաք աղէկէն իմանալ թէ ո՛րչափ հոգացողութեամբ, հսկողութեամբ ու յարատեւութեամբ պէտք է որ աշխատիք ու տաժանիք, որպէս զի Ձեզի

յանձնուած հաւատացեալներն աս թուն՝ աւոր աղօտներէն արգելուք ու փրկաւէտ աղօտներուն վրայ արածէք ու անոնց մէջին մէջ կաթողիկէ եկեղեցւոյ վարդապետութիւնն աւելի տոգորէք։ Եւ որպէս զի կարող ըլլաք դիւրաւ ատոր հասնիլ, մի դանդաղիք, Պատուական Եղբարք, գլխաւորաբար հոգւոց հոգն ունեցողներուն եռանդն ու նախանձք միշտ գրգռելու, որպէս զի ճշդիւ իրենց պաշտօնը կատարելով՝ երբէք չդանդաղին Աստուծոյ աւետարանն իմաստնոց և անմոլոց աւետարանելու, ու խորհրդոց առատութեամբ իրենց յանձնուած քրիստոնեայ ժողովրդեան օգնելու, և գլխաւորաբար տղոց ու տխմար մարդկան ուղղափառ հաւատոյ վարդապետութիւնն ու քարոզց հրահանգներն երկայնմտութեամբ ու սիրով տրվեցուցնելու, և զամէնքն առողջ վարդապետութեամբ յորդորելու, որպէս զի ամէն տեսակ վարդապետութեան հոլմով չերերան։ Ձեր թեմերուն բոլոր քահանայներուն ալ միշտ յիշեցուցէք՝ որ մոռնան իրենց պաշտօնին ծանրութիւնը, զոր որ 'ի Տէր ընդունած են և նոյնը ճշդիւ կատարելու ջանան, որպէս զի ամէն առաքինութեանց օրինակները քրիստոնէից ընծայեն, աղօթից յաճախեն, և գլխաւորաբար սրբազան ուսմանց անընդհատ պարապին և իրենց բոլոր զօրութեամբը ճգնին հաւատացելոց

յաւիտենական փրկութիւնը հոգալու։ Նոյնպէս զի դիւրաւ կարող ըլլաք ժիր ու ճարտար մշակներ ունենալ՝ որոնք Տէրոջը այգին մշակելու ատենին՝ կարող ըլլան Ձեզի ժամանակին գործակից ըլլալ, ամենեւին աշխատութեան մը, ամենեւին մտադրութեան մը մի՛ խնայէք, Պատուական Նղբարք, որպէս զի երիտասարդ կղերականք կանուխ իրենց պղտի հասակէն ընտիր վարպետներով բարեպաշտութիւն ու ճշմարիտ եկեղեցական հոգի ստանան, և որ և իցէ մոլորութեան վտանգէ հեռու ուսմամբ մը և գլխաւորաբար եկեղեցական հրահանգով ազէկ կրթուին։ Վասն զի անդէտ չենք, Պատուական Նղբարք, թէ ձեր եպիսկոպոսական պաշտօնը կատարելու համար՝ որչափ մեծամեծ դժուարութիւններ ձեր առջեւը կան։ Բայց զօրացարուք Տէրամբ և կարողութեամբ զօրութեանն նորա, ստէպ յիշելով որ Քրիստոսի համար կը պատգամաւորիք, որն որ իրեն ոչխարներուն համար իր անձը տուաւ, մեզի օրինակ թող տալով՝ որ անոր հետքէն երթանք։

Ձկայ մէկն որ չգիտնայ՝ թէ որչափ Կաթողիկէ եկեղեցւոյ արեւելքի մէջ օգուտ ու զարդ եղած են Միայնակեցաց կրօնաւորական Վերդապետանները։ Վասն զի իրենք վարուց կատարելութեամբ, բարուց ծանրութեամբ և կրօնաւորական բարեկարգութեամբ փայ-

ելելով հաւատացելոց ալ Ջանացին բարի գործոց օրինակներ տալ, ողջոյն տրվեցունել, ուսում ու զանազան հրահանգներ մշակել, Episkoposաց օգնական ու պիտանի ըլլալ։ Բայց շատ դժբախտ պատահարներ և ժամանակներ վրայէ վրայ գալով աս տրբազան Գերդաստաններն՝ որոնք թէ՛ քրիստոնէական և թէ՛ քաղաքական հասարակութեան շատ արդիւնաւոր եղած են, տեղ տեղ կամ իրենց Կարգին բարեկարգութենէն շեղեցան և կամ բոլորովին մարեցան գացին։ Ընդ՝ որովհետև մեր ամենատուրբ կրօնին մեծ օգուտ կ'ըլլայ՝ թէ որ աս նուիրական Գերդաստանները, գլխաւորաբար հոն ուր որ մարած են, նորէն կենդանանան և արեւելեան ազգաց մէջ իրենց նախնական պայծառութեամբը փայլին, անոր համար կ'ուզենք՝ որ Մեզի ծանուցանէք՝ թէ աս բանիս վրայ ինչ կարծիք ունիք, և թէ՛ ինչ կերպով կարելի է՝ որ աս նուիրական Գերդաստանները նորէն կանգնուին։

Կատարեալ համոզուած ենք որ Դուք, Պատուական Եղբարք, չէ թէ միայն աս մեր բաղձանքն ու խնդիրքը յօժարութեամբ ու սիրով պիտի՝ որ կատարէք, հապա նաև մանաւորձգութեամբ ու մտադրութեամբ մը Մեզի ուրիշ շատ բաներ ալ պիտի՝ որ առաջարկէք, անանկ բաներ՝ որոնք ըստ ձեզ՝ պէտք են ըլլալ՝ որպէս զի ադ կողմերը մեր ամենատուրբ

կրօնին, կղերին ու հաւատացեալ ժողովրդեան աւելի օգուտ ըլլայ։ Եւ որովհետեւ Մեր Սիւնհոդոսի Ժողովոյն գահերէց Կարդինալին ընդհանրական թուղթէն իմացած էք՝ որ բաղմաթիւ տրբոց հանդիսական հրատարակութեան ատեն (զոր որ, թէ որ Աստուած կ'ուզէ, առաջիկայ Պէնտէկոստէի օրը պիտ'որ կատարենք) Մեզի շատ հաճելի բան կ'ըլլայ՝ թէ որ Պատուական Եղբարք՝ Episkopատունք ներկայ ըլլան, անոր համար կը յուսանք՝ որ աս առթիւ, թէ որ ձեր թեմերուն իրողութիւնները թոյլ կուտան, զ'Ձեզ կը տեսնենք ու կ'ողջագուրենք ու Ձենէ անձամբ նոյն թեմերուն տեղեկութիւնները կրնանք առնուլ։

Բայց առայժմ, ինչպէս որ ձեր ամէնը բարեպաշտութենէն ու Episkopատական եռանդէն կ'ապատի, շարունակեցէք, Պատուական Եղբարք, մեծագոյն ժրութեամբ ու ճգամբ ձեր պաշտօնը կատարելու և ամենայն փութով ձեր հաւատացեալներուն փրկութեանը հսկելու, ու զանոնք ևս քան զևս խրատելու և յորդորելու՝ որ ուղղափառ կը բռնին դաւանութեանը մէջ երթալով աւելի հաստատուն և անշարժ ըլլան ու Աստուծոյ և անոր սուրբ եկեղեցւոյն պատուիրանները երկիւղածութեամբ պահեն և արժանապէս կեանք վարեն՝ Աստուծոյ յամենայնի հաճոյ ըլ-

լալով և բարի գործովք պատրաստեր։

Իսկ զանոնք՝ որոնք Կաթողիկէ եկեղեցւոյ ծոցը կը դառնան՝ մեր սիրտը մեծապէս ուրախացուցնելով, ձեր ընդարձակ քաղցրութեամբը հայրաբար ընդունեցէք, և ամեն կերպ փոյթն ըրէք՝ որ առնք օրէ օր աւելի եւս սիրալիր բանիւք հաւատոյ մնանելով ու շնորհաց պարգեւներով հաստատուելով՝ իրենց սուրբ կոչմանը մէջ անշարժ յարատեւեն և միշտ ժրագոյն ոտքերով Տիրոջը շաւիղներէն քալեն ու մնան ան ճամբուն վրայ՝ որն որ 'ի կեանս կը տանի։ Այս ինչպէս որ ձեր ազնիւ աստուածսիրութենէն կ'սպասուի, երբէք մի դադրիք ամեն հնարք հնարելու՝ որ կարող ըլլաք ամենայն քաղցրութեամբ, համբերութեամբ, վարդապետութեամբ, հեզութեամբ, մեղմութեամբ խեղճ մոլորեալները Քրիստոսի շահելու, անոր միմիայն փարախը դարձնելու և յաւիտենական երջանկութեան յուսոյն բերելու։ Իսկ ան նեղութեանց ու դժուարութեանց մէջ՝ որ ձեր եպիսկոպոսական պաշտօնէն չեն կրնար հեռու ըլլալ, մանաւանդ աս դժնդակ ժամանակներնուս մէջ, վստահութիւնդ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի շնորհացը վրայ դրէք, յիշելով միշտ՝ թէ ոչ ոք որ շատերուն արդարութիւն կը տրվեցուցնէ, աստղերու պէս յաւիտեանս պիտի՝ որ փայլին։

Վերջապէս, Պատուական Եղբարք, կ'ուզենք որ ստոյգ համոզուած ըլլաք՝ որ մեծ է յօժարամտութիւնն իւր՝ որով Ձեզի բարիք կը բաղձանք 'ի Տէր։ Եւ երբէք զանց չենք ըներ ամենայն աղօթիւք և խնդրուածովք գոհութեամբ մէկտեղ Աստուծմէ խոնարհաբար և ժառութեամբ խնդրելու՝ որ իրեն մարդասիրութեանը յորդառատ պարգեւները Ձեր վրայ ամէն առեն աննախանձ զեղու, որոնք նաև ձեր հսկողութեանը յանձնուած սիրելի հօտին վրայ առատապէս լինին։ Եւ իբրեւ առ պարգեւներու յայտարար, և Մեր Ձեզի ունեցած յօժարակամութեան առհաւաստեայ՝ կը շնորհենք 'ի խորոց սրտի Ձեզի, Պատուական Եղբարք, և Ձեր ամէն մէկուն հոգացողութեանը յանձնուած բոլոր կղերականաց՝ և հաւատացեալ ժողովրդականաց՝ Առաքելական Օրհնութիւն։

Տրուեցաւ Հռոմ Ս. Պետրոսի քով
1862 տարւոյն Ապրիլի 8ին.
Մեր Քահանայապետութեանը
տասնուվեցերորդ տարին։

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ց. ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ

Sec 54

«Ազգային գրադարան»
NL0109829